

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2016 թվականի առաջին կիսամյակում մարզպետարան է մուտքագրվել 5098 փաստաթուղթ, առաքվել՝ 2938 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 2, մարդու իրավունքների պաշտպանից՝ 0 ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 604, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 623, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1135, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1850, քաղաքացիներից՝ 855 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 26: ՀՀ նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 6, Ազգային ժողովից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 22, նախարարություններից՝ 4, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 4, մարդու իրավունքների պաշտպանից՝ 1 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել, կատարվել է նաև դրանց վերլուծությունը:

2016թ. առաջին կիսամյակում ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին ներկայացվել է 469 գրություն, այդ թվում՝ 38 առաջարկություն, որից կատարվել է 23 -ը, ընթացքի մեջ է 15-ը:

ՀՀ նախարարություններին առաքվել է 567 գրություն, այդ թվում՝ 19 առաջարկություն, որից կատարվել է 13-ը՝ ընթացքի մեջ է 61-ը:

2016թ առաջին կիսամյակում ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից ընդունվել է 57 որոշում, արձակվել՝ 76 կարգադրություն:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2016թ. առաջին կիսամյակում կատարվել է 312 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ նախագահի աշխատակազմ: